ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ծ. Պ. ԱՂԱՅԱՆ

Վերջին տարիների ընթացքում ինչպես մեզ մոտ, այնպես էլ սփյուռքահայ մամուլում մի շարք հոդվածներ հրապարակվեցին հայ ժողովրդի ազատագրական պայքարի ականավոր հերոսներից մեկի՝ Անդրանիկի մասին։ Այդ հոդվածների զգալի մասը հիմնականում ճշմարտացիորեն բացահայտում է Անդրանիկի կերպարը, սակայն առանձին հեղինակներ աչքաթող են անում նրա գործունեության որոշ թույլ կողմերը կամ, ընդհակառակը, ընդգծում են Անդրանիկի կյանքի ու գործի միայն թերությունները։

Այդ առիթով ավելորդ չենք համարում մի անգամ ևս անդրադառնալ Անդրանիկի գործունեությանը, աշխատելով տալ նրա անցած ուղու ճշմարտացի լուսաբանումը։

* * *

XIX դարի վերջին քառորդում, հատկապես 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, հայ ժողովրդի արևմտյան հատվածի վիճակը խիստ ծանրացավ աբդուլ-համիդյան արյունոտ ռեժիմի պայմաններում։ Սուլթանական Թուրքիան, որ միշտ էլ ամենադաժան ու բիրտ կերպով ճնշել ու հալածել է իր լծի տակ հեծող ժողովուրդներին, հատկապես հայերին, 1895—96 թթ. սկսեց հայ անզեն բնակչության զանգվածային կոտորածները և որոշ ընդմիջումներով դա շարունակեց մինչև առաջին համաշխարհային պատերազմը։ Ապա հետևեցին 1915 թ. արևմտահայության արյունոտ գենոցիդը և մինչև 1921 թ. տևող կոտորածները։

Հուսալքված իմպերիալիստական մեծ տերությունների սին խոստումներից, չկարողանալով տանել օսմանյան տերության լուծը և հանդուրժել նրա ժողովրդասպան քաղաքականությունը, հայ աշխատավորները դիմում էին ինքնապաշտպանության, կազմակերպում էին հայդուկային խմբեր, որոնք մարտնչում էին սուլթանի ագահ ու արյունարբու պաշտոնյաների դեմ, օգնության էին հասնում իրենց բազմաչարչար եղբայրներին։ Հայդուկների պայքարն իր սուր ծայրով ուղղված էր թուրքական բռնակալության դեմ և այդ առումով ազգային-ազատագրական շարժման դրսևորումներից մեկն էր։ Հայդուկների մեջ քիչ չէին անվեհեր մարտիկները, որոնք, մտահոգված ժողովրդի ազատագրման վեհ գործով, գնում էին ինքնազոհության։ Նրանցից մեկն էլ Անդրանիկ Թորոսի Օզանյանն էր։

Անդրանիկը ծնվել է 1865 թ. փետրվարի 25-ին, Արևմտյան Հայաստանի Շապին-Գարահիսար գյուղաքաղաքում, արհեստավոր-վաճառականի ընտանիքում։ 1875—1882 թթ. սովորել և ավարտել է տեղի ազգային Մուշեղյան վարժարանը։ Մանուկ հասակից նա ականատես է եղել իր հարազատների ու ժողովրդի անլուր տանջանքներին ու հալածանքներին։ Չհաշտվելով այդ վի-

ճակի հետ, երիտասարդ Անդրանիկը հաճախ էր ըմբոստանում տիրող անարդարության դեմ։ 18 տարեկան հասակում Անդրանիկը բանտարկվում է մի ոստիկանի հետ դատաստան տեսնելու համար։ Ընկերների օգնությամբ նրան հաջողվում է բանտից փախչել Կ. Պոլիս, ուր զբաղվում է հյուսնությամբ (1884—1886)։ Այստեղ նա շփվում է հայ ազատագրական շարժման գործիչների հետ և 1891 թ. դառնում հնչակյան կուսակցության անդամ։ 1892 թ. Անդրանիկը սպանում է Կ. Պոլսի ոստիկանապետին, որը հայտնի էր հատկապես հայ մտավորականների նկատմամբ ցուցաբերած բռնություններով։ Ապա 1894 թ. ակտիվ մասնակցում է հայդուկային շարժմանը Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում (Տարոն-Սասուն, Վանի շրջան և այլն)։ 1895 թ. նա անցնում է Ռուսաստան (Սևաստոպոլ, Յալթա) և մոտիկից ծանոթանում ռուսական իրականությանը, իսկ 1897 թ. Կովկասի վրայով անցնում է Արևմտյան Հայաստան։ Սկզբում Անդրանիկը կռվում էր Հայտնի Սերոբի խմբում։ 1900 թ. Սերոբի սպանությունից հետո նա կարճ ժամանակում կազմակերպում է մի այլ ուժեղ հայդուկային խումբ և 1901 թ. պաշտպանական մարտեր մղում Մուշի շրջանում։ Օսմանյան կառավարությունը ոգալի քանակությամբ զորամասեր է ուղարկում Անդրանիկի դեմ։ Վերջինս երեք շաբաթ շարունակ, ամրացած Առաքելոց վանքում, հսկայական վնասներ պատճառելով թշնամուն, անվնաս դուրս է գալիս շրջապատումից։ Այդ հերոսական մարտը բարձրացնում է Անդրանիկի փառքը, դարձնում նրան Արևմտյան Հայաստանի ամենահամբավավոր դեմքերից մեկը։ Հետագայում Անդրանիկը նշել է. «Երբ երկաթե կամքով և մաքուր հայրենասիրությամբ այս փոքրիկ խումբը կկռվեր հաղթանակը շահելով, այդ պահը իմ ամենաուրախ օրն էր»[1]։ Նշանակալից էին նրա մղած պաշտպանական մարտերը նաև Սասունում։ 1903 և 1904 թթ. ժողովրդական ապստամբության դեմ մեծ զորք է ուղարկվում։ Ապստամբության ճնշումից հետո էլ հայդուկները շարունակում են պարտիզանական պայքարը։

Հայ ժողովրդի ծանր ու մղձավանջային վիճակը հուզում էր Անդրանիկին։ Նա աշխատում էր բոլոր հնարավոր միջոցներով պայքար ծավալել փրկելու հայրենիքը թուրքական բարբարոս լծից։ Նոր ուժեր ու միջոցներ հավաքելու և ավելի գործնական ծրագրեր որոնելու համար նա 1904—1905 թթ. այցելում է Պարսկաստան, Բաքու, Թիֆլիս, Փարիզ, Ժնև։ Այդ շրջագայությունները ավելի են ընդարձակում Անդրանիկի կապերը հայ հասարակական գործիչների հետ, ամրացնում նրա հաստատուն որոշումը մինչև վերջ մարտնչելու հայ ժողովրդի ազատագրման համար։ Այդ տարիներին նրան արդեն ամենուրեք անվանում էին հայկական Գարիբալդի, ազգային հերոս։ Կարևոր է այն փաստը, որ Անդրանիկը ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրությունը կապում էր ռուսական առաջին հեղափոխության հաղթանակի հետ։ Ըստ «Frankfurter Zeitung» թերթի հաղորդման Անդրանիկը 1905 թ. Ժնևում եղած ժամանակ հայտարարել է, որ հայկական հարցի լուծումը կապված է ռուսական հեղափոխության հաղթանակի հետ[2]։

Միաժամանակ Անդրանիկը անհրաժեշտ էր համարում շարունակել ազատագրական պայքարը Թուրքիայում։ Նա ցավով էր նշում, որ հայ և թուրք ժողովուրդների ազատագրական պայքարը միավորելու գործում մեծ խոչընդոտ-

---

1 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1965, № 1, էջ 22։

2 Տե՛ս «Մշակ», № 77, 1905, ապրիլի 27։

ներ են առաջանում։ Հայերը «ամենևին տրամադրված չեն դադարեցնելու հեղափոխական շարժումը Թուրքիայում,— ասել է Անդրանիկը,— թեպետև նա մեծ դժվարություն է ներկայացնում այն տեսակետից, որ մահմեդական ազգաբնակությունը դեռևս չի հասկանում, որ խոսքը ընդհանուր ազատության մասին է, և հրաժարվում է օգնել հայերին»[3]։

1907 թ. Անդրանիկը բնակություն է հաստատում Բուլղարիայում։ Նույն թվականին նա մասնակցում է դաշնակցության Վիեննայի համագումարին։ Սուր բանավեճի մեջ մտնելով դաշնակցական գործիչների հետ, Անդրանիկը պաշտոնապես հայտարարում է, որ դուրս է գալիս այդ կուսակցությունից։ Անդրանիկը այնուհետև անցնում է Ֆրանսիա, Բելգիա, Անգլիա, որտեղ աշխատանք է ծավալում Արևմտյան Հայաստանի ազատագրման համար զենք ու զինամթերք ձեռք բերելու ուղղությամբ։ Նա հավատացած էր իր ձեռնարկած այդ գործի հաջողությանը։ Հենց այդ տարիներին էլ նա մշակում է «Մարտական հրահանգներ» յուրահատուկ ձեռնարկը պարտիզանական կռիվների համար։

Օդեսայի ժանդարմական վարչության 1910 թ. ապրիլի 7-ի հաղորդագրության համաձայն Անդրանիկը եղել է Փարիզում, Թեհրանում, Թուրքահայաստանում, Անդրկովկասում։ Այնուհետև Անդրանիկի մասին հայտնվում էր, որ նա շատ փորձված մարտիկ է, թուրքահայերին կազմակերպել է թուրքերի դեմ կռվելու, որ Վառնայում իր սեփական երկու սենյակները տրամադրել է փամփուշտներ պատրաստելու համար[4]։

Հետո Անդրանիկը լինում է Եգիպտոսում և ապա հաստատվում է Սոֆիայում։ Մոտիկից ծանոթանում է «Մակեդոնիայի հեղափոխականների հետ, որոնց նա այնքան նման էր իր հոգեբանությամբ ու կռվելու եղանակով»[5]։

1912—1913 թթ. բալկանյան պատերազմի ժամանակ, որն անշուշտ ազատագրական բնույթ ուներ, Անդրանիկը բուլղարական բանակի կազմում հայ կամավորական վաշտի հրամանատարն էր (պոդպորուչիկի կոչումով) և մի շարք հերոսական սխրագործություններ է կատարել։

Անդրանիկի Բալկաններում գտնվելու առիթով 1913 թ. «Կիևսկայա միսլ» թերթը գրել է, որ նա հայտնի ժողովրդական հերոս է, նրա անունը «հայտնի է Տաճկաստանում, Անդրկովկասում և նույնիսկ Եվրոպայում։ Անդրանիկը... ազատության մարտիկ է, բողոքի մարմնացում թուրքական ճնշումների դեմ... Այժմ Անդրանիկը հայտնի է դառնում Բալկանյան թերակղզում»[6]։

Ահա թե ինչպես է նկարագրել այդ իրադարձությունների անմիջական մասնակիցներից մեկը Անդրանիկի խմբի գործողությունները բուլղար ժողովրդի ազատագրական պայքարի օրերին։

«Հոկտեմբերի կեսին ես Սոֆիայից ուղեկցում էի հայ կամավորական խմբին, որը գնում էր միանալու մակեդոնական բանակին։ Ուրիշ ազգի, օտար լեզվի, տարբեր սովորությունների տեր մարդիկ ի մի հավաքված բուլղարական դրոշակի տակ գնում էին պաշտպանելու ուրիշ ազգությունը, գնում էին կռվելու ընդհանուր թշնամու դեմ... Կամավորները,... թվով 230 հոգի, թուխ և բրդոտ մարդիկ էին, 19-ից մինչև 45 տարեկան։ Խմբի մեջ կային տարբեր կյանքի,

3 Նույն տեղում։
4 Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1965, № 1, էջ 7.
5 «Հորիզոն», № 171, 1913, օգոստոսի 3։
6 Նույն տեղում։

տարբեր անցյալի տեր մարդիկ։ ...Խմբի առաջից լուռ, աշխույժ քայլվածքով գնում էր Անդրանիկը»[7]։

Հետո ականատեսը պատմում է, որ պատերազմի դաշտում ամեն ինչ ավերվում է և ոչնչանում. «...Արշավանքը ծանր է պատերազմից. քանի անգամներ, երբեմն առավոտները, երբեմն գիշերները, գետերն անցել ենք՝ պատռելով սառույցի պես պաղ ջուրը։ Հագուստներս չորացնել, հանգստանալ անկարելի էր, տաքանալու համար սկսում ենք ավելի արագ քայլել... Կանոնավոր զորքերի հետ մասնակցում էինք Յավեր փաշայի դեմ մղած կռվին... Մեր մեջ կային այնպիսիները, որոնք, ինչպես կարծում էին, սարսափից կչորանան, բայց հակառակը եղավ. կռվում էին հերոսի նման։ Ռոդոսթոյից եկած Պողոս անունով 16 տարեկան մի պատանի կար մեր մեջ։ Ասում եմ նրան. «Դու ի՞նչ գործ ունիս էստեղ»։ Սակայն 15 ժամվա ընթացքում հրաշքներ գործեց առաջին շարքերում։ Յավեր փաշային հալածելու ժամանակ Պողոսը բոլորից առաջ էր և այն էլ ամենավտանգավոր տեղերում։ Բոլորս էլ լավ էինք կռվում։ Անդրանիկը մեզ հետ հավասար չափով կռվում էր. պատերազմի ժամանակ մեր ղեկավարը նա էր»[8]։

Անդրանիկի վաշտը այդ կռվում գերի է վերցնում թուրքական կորպուսի հրամանատար Յավեր փաշային և իր մարտական սխրագործությունների համար պարգևատրվում է։ Բուլղարիայում հուշարձան է կանգնեցվել հայկական վաշտի հերոսների հիշատակին։

Բուլղարական բանակի փոխգնդապետ Պրոտոգերովը կառավարական պարգևներ է հանձնում հայկական ջոկատին։ Այդ պարգևատրման ժամանակ նա ասել է. «Մի ժողովուրդ, որ գնահատում և հարգում է իր հերոսներին, երբեք չի մեռնի։ Այդպիսի ժողովրդի ապագան պայծառ է և նրա փրկությունը մոտ։ Կեցցե Անդրանիկը»։ Կառավարության ներկայացուցիչը հայտարարեց հայ զինվորներին. «Բոլորդ էլ կռվում էիք որպես առյուծներ։ Սակայն քաջության ոսկյա խաչը հազվագյուտ բան է և տրվում է միայն ամենաքաջին»։ Եվ բուլղարական «Շումի Մարիցա» հիմնի հնչյունների տակ, արտակարգ հանդիսավորությամբ Անդրանիկի կուրծքը զարդարվում է բուլղարական բարձր շքանշանով։

Առաջին համաշխարհային պատերազմը սկսվելուց հետո Անդրանիկը Բուլղարիայից մեկնում է Ռուսաստան, ժամանում Թիֆլիս և 1914 թ. հոկտեմբերին նշանակվում հայկական առաջին կամավորական ջոկատի հրամանատար։ 1914 թ. նոյեմբերից մինչև 1915 թ. օգոստոսը Անդրանիկը ցարական բանակի կազմում մասնակցում է պատերազմական գործողություններին Կովկասյան ռազմաճակատում, որպես հայկական առաջին կամավորական ջոկատի հրամանատար։ Նա պարգևատրվում է Գևորգիևյան երեք խաչերով (առաջին, երկրորդ, երրորդ աստիճանի)։

Առանձնապես փայլուն կերպով դրսևորեց իրեն Անդրանիկը Դիլմանի հրաչակավոր ճակատամարտում 1915 թ. ապրիլին, որտեղ նրա ջոկատը ջախջախեց Խալիլ բեյի կորպուսը և կանխեց Իրանական Ադրբեջանից գերմանա-թուրքական զորքերի Անդրկովկաս ներխուժելու վտանգը։

---

7 Նույն տեղում։

8 Նույն տեղում.

9 Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1965, № 1, էջ 11.

Ահա այդ տարիներին թուրք ջարդարարները, գերմանական իմպերիալիստների խրախուսանքով, սկսեցին իրականացնել հայ ժողովրդին բնաջնջելու, պատմության մեջ մինչև այդ նմանը չունեցող գենոցիդի քաղաքականությունը։ Ոչնչացվեց ավելի քան մեկ միլիոն հայ։ Ս. Մ. Կիրովը գրել է. «Թուրքերը փայփայում են Թուրքիայի ամբողջ հայ բնակչությանը բնաջնջելու վաղեմի հրեշավոր երազը»[10]։ Իմպերիալիստների ու ցարական սատրապների կողմից խարված ու լքված հայ հայրենասերները, դրանց թվում և Անդրանիկը, ծանր վիճակի մեջ էին։

1915 թ. ամռանը հայ կամավորական խմբերը քայքայվում են։ Անդրանիկը մեծ հիասթափություն է ապրում։ Նույն թվականի աշնանը Թիֆլիսում նա համալրում է իր խումբը և նոյեմբերին կրկին մեկնում ռազմաճակատ, մասնակցում կռիվներին մինչև 1916 թ. մարտը, որից հետո հայկական կամավորական խմբերը կանոնավոր զորամասերի վերածվելու կապակցությամբ Անդրանիկը պաշտոնաթող է լինում։ Ցարական կառավարությունը, օգտագործելով հայկական ուժերը իր նպատակների համար, ուխտադրժորեն ոչ միայն հրաժարվեց հայկական ինքնավարություն ստեղծելու իր խոստումներից, այլև ամայացած հայկական շրջանները կաղակներով բնակեցնելու գաղութարարական պլաններ էր կազմում։ Այդ ամենը Անդրանիկին և մյուս հայրենասերներին նոր հիասթափություն է պատճառում։ Ցարական գեներալները Անդրանիկի համար ծանր ու անտանելի վիճակ են ստեղծում։ 1916 թ. հուլիսից նա հեռանում է Հյուսիսային Կովկաս, որտեղ մինչև 1917 թ. դեկտեմբերը զբաղվում է հայ գաղթականությանը օգնություն ցույց տալու, նրանց աշխատանքի տեղավորելու և ապրուստի միջոցներ հայթայթելու գործով։

Անդրանիկը իր ամբողջ էությամբ տարված էր իր ժողովրդին պատերազմի, սովի ու համաճարակի արհավիրքներից փրկելու հոգսերով։ 1916 թ. հայ գաղթականությանը օգնություն ցույց տալու կապակցությամբ Պյատիգորսկում կազմակերպվում է հանդիսավոր երեկո։ Այնտեղ էին հավաքվել շատ մեծատուններ՝ զուգված-զարդարված թանկարժեք քարերով։ Այդ վիճակը և նրանց փքուն ճառերը մեծ զայրույթ են առաջացնում Անդրանիկի մեջ։ Եվ ահա նա հուզմունքով դիմում է ներկաներին. «Շատ եմ տեսել ես նման բանկետներ և լսել օվացիաներ, գեղեցիկ ճառեր, ճոռոմ ֆրազներ... սակայն, ինչ օգուտ այդ բոլորից իմ տանջված ժողովրդի համար...»։ Եվ հետո շարունակում է. «Ինչու համար եք զուք զուգվել թանկագին զգեստներով, ինչու եք զարդարվել այդ թանկագին ադամանդներով, հանեցեք այդ ամենը և զոհաբերեցեք բախտից անիծված, սև ճակատագրի զոհ, աղքատ ու բաղցից մեռնող հայ եղբայրներին...»[11]։

Ականատեսներից մեկը պատմում է, որ Անդրանիկը, դիմելով կանանց, ասում է. «Կպահանջեմ ձեզնից ալ օրինակ մը վերցնեք V դարի հայ կնոջից, ծախեք վաղը այդ զարդարանքը և տրամադրեք հայ որբերուն հացի, սննդի համար. նրանք են ձեր ոսկին, հայ ժողովրդի հույսը»[12]։

Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը ազգային-ազատագրական պայքարի նոր վերելք առաջացրեց ճնշված ժողովուրդների

10 «Թերեք», N 417, 1916, փետրվարի 14.

11 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1965, N 1, էջ 16—17։ Տե՛ս «Армянский вестник», № 26, 1916.

12 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1965, N 1, էջ 21։

մեջ։ Անդրանիկի և նրա համախոհների ջանքերով հիմնադրված «Հայաստան» թերթը դեռևս պատրանքներ ուներ Ժամանակավոր կառավարության և դաշնակիցների նկատմամբ, որոնց օգնության հետ էր նա կապում հատկապես հայ ժողովրդի ազատագրումը։ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո Անդրկովկասի ազգայնական կուսակցությունները իմպերիալիստների թելադրանքով երկրամասն անջատեցին Սովետական Ռուսաստանից և առանց այն էլ քայքայված Հայաստանը թողեցին Թուրք ջարդարարների և իմպերիալիստների հոշոտմանը։

Ռուսական բանակի գեներալ Ջերնոզուբովը 1917 թ. ապրիլին Անդրանիկին հետևյալ կերպ է բնութագրել. «Ես միշտ Անդրանիկի մեջ տեսել եմ ջերմ հայրենասերի, որը խոր և ջերմորեն սիրում է իր հայրենիքը, պայքարում Հայաստանի ազատության համար»[13]։ Այդ կապակցությամբ տեղին է մեջ բերել Հովհ. Թումանյանի նամակը։

«Սիրելի Անդրանիկ,— գրել է նա,— ահավոր մոմենտի առջև ամեն մարդ պետք է ընդհանուրի սեղանին բերի ինչ որ ունի և կարող է, թե՛ վերահաս վտանգը կանխելու և թե՛ բաղձալի խաղաղությանը հասնելու համար։

Ես չորս տղա ունիմ, չորսն էլ երկրի կառավարության, Ազգային խորհրդի և քո տրամադրության տակ են. իսկ չորս աղջիկս էլ պատրաստակամ զնում են թիկունքի աշխատանքներին ինչի որ ընդունակ կլինեն։ Ես էլ հետևաբար ոչինչ չեմ խնայի, միայն թե կարողանանք բոլոր ազնիվ ժողովուրդների և ապատասեր հոգիների հետ միասին ետ մղել վերահաս վտանգը և պաշտպանել ամենքիս սրբազան իրավունքներն ու ազատությունը։ Ես անսասան հավատարիմ քո շատ փոթորիկներու մեջ ձեռք բերած փորձառությանը, վառ հայրենասիրությանն ու ազատասիրությանը, այլև բնական մարդասիրությանը ու զինվորական բարձր տաղանդին, և պատրաստ դալու ե՛րբ և ո՛ւր կկոչի քո եղբայրական ձայնը՝ համբուրում եմ հերոսական ճակատդ։

Մինչ ո՞ Հովհ. Թումանյան

Հ. Դ.— Սրա հետ միասին, որովհետև ես էն կարծիքին եմ, որ ամեն մի հայ այժմ պետք է իրեն դնի կամավոր տուրքի տակ, պարտավորվում եմ ամսական հարյուր ռուբլի տալ ես նպատակով մեր ընդհանուր գանձարանին»[14]։

Անդրանիկը երկիրը պաշտպանելու կոչ է անում հայ հայրենասերներին և կազմում Հայաստանի երկրապահ զորամաս։ 1918 թ. հունվարին Անդրանիկին այդ զորամասի հրամանատարի պոստում շնորհվում է գեներալ-մայորի կոչում։ Նրան հանձնարարվում է Էրզրումի շրջանի պաշտպանությունը։ Սակայն Էրզրումի կայազորում և մյուս զորամասերում այն ժամանակ ստեղծվել էին անբարենպաստ պայմաններ։

Անդրանիկը մեծ դժվարություններ հաղթահարելով հասնելով Էրզրում, ասել է. «Ես դատ բաղաքի ժողովուրդը լքված և հուսահատված։ Իմ ներկայությունը թեև ոգևորեց զանոնք, բայց ես չեմ տեսներ այն ոգին, որ պետք է ունենար ժողովուրդ մը իր ազատության նախօրյակին»[15]։

---

13 Նույն տեղում, էջ 15։
14 «Ակրմենիա», 1918, հունիսի 12, հին տոմարով մայիսի 30։
15 «Մշակ», № 56, 1918, մարտի 16։

Այդ ժամանակ քաղաքում գործող դավադիր ուժերի գործողությունների հետևանքով քաղաքը հանձնվեց Թուրքերին։

Երզրումը Թուրքական զորքերի կողմից գրավվելուց հետո, մինչև մայիսի 18-ը Անդրանիկի ջոկատը մարտերով նահանջում է Ալեքսանդրապոլ—Վարանցովկա—Ջալալօղլի—Դսեղ։ Նա չուներ ուժեղ թիկունք։ Ամենուրեք կազմալուծվում էին զորքերի շարքերը, չկար կարգապահություն, չկար հեղինակավոր զինվորական առաջնորդ։ Բաշ-Ապարանի, Սարդարարադի կռիվների ժամանակ Անդրանիկի ջոկատը Դսեղում էր և հնարավորություն չունեցավ մասնակցել այդ կռիվներին։

Անդրանիկը բոլոր պարագաներում էլ հայ ժողովրդի բախտը կապում էր Ռուսաստանի հետ։ Անդրանիկը, դատապարտելով դաշնակցականներին, ասում էր. «Արյուն ձեր ի գլուխ ձեր. ըրեք ինչ որ կուզեք, բայց Ռուսիո դռները մեզի դեմ մի փակեք»։ Նա դեմ էր Հայաստանը Սովետական Ռուսաստանից անջատելու ավանտյուրիստական քաղաքականությանը։ Այդ հարցում նա խիստ հետևողական էր և այդ հողի վրա ընդհարվում է դաշնակցական կառավարության հետ ու հեռանում իր ջոկատով։

1918 թ. հունվարին Անդրանիկը ասել է. «Կովկասյան ժողովուրդները միտք չունին բաժանվելու ռուս դեմոկրատիկ հանրապետությունեն, այլ էր, երբ կար ցարիզմը...»[16]։ Բաժանապարանելով Անդրկովկասի ռեակցիոն ուժերի կազմակերպած՝ ռուս զինվորների կոտորածը Շամխորի և Գյանջայի մոտ, նա հայտարարել է. «մեր լեռներուն վրա երեք տարիե ի վեր կռվող, արյուն թափող Ռուսաստանի զավակներուն հանդեպ կարելի չէ այդպես վարվել»[17]։

Անդրանիկը ռուս զինվորներին զինաթափ անելու մտադրություն ունեցող դաշնակցականներին դայրույթով ասել է. «Մեր միակ բարեկամը Ռուսիան է, և դուք ձեր աղետարեր ձեռնարկով կուզեք դա՞յն ալ հեռացնել մեզմե։ Մենք հրացաններու պետք չունինք, մենք անոնց բարեկամության պետքն ունինք»[18]։

Անդրանիկը, բարձր գնահատելով Հոկտեմբերյան հեղափոխության ազատարար դերը, այն համոզմունքն էր արտահայտում, որ բոլոր ճնշված ժողովուրդները, դրանց թվում նաև հայերը, պետք է կարողանան օգտվել այդ ազատությունից։ «Ասկե առաջ կպատճառարաններին, թե ցարիզմը կա,— ասել է Անդրանիկը,— ռուս զինվորական իշխանությունները լավ չեն վարվիր. բայց հիմա այդ պատճառարանությունները վերջացած են։ Դավաճանություն պիտի ըլլա մնալ անտարբեր, և ազատություն ձեռք բերելու բոլոր կարելի միջոցները կան»[19]։ Իսկ իմպերիալիստներին ստորաքարշություն անողների և հույսը Արևմուտքի վրա դնողների մասին նա գրում է. «Միևնույն ստրկական ոգին կշարունակվի կարծես, միևնույն ստրուկն է, որ բաշ կուգա գետինները, այն հրահրոցը, որ կա, բոլորովին ֆիքթիվ է, տակավին ոնալ ուժ չի ներկայանար»[20]։

Դաշնակցական ազգային խորհրդի գործունեությունը Անդրանիկը միշտ էլ համարել է ազգակործան և խզել է կապերը նրա հետ։ Նրանց հետ «ես հարաբերություն չունիմ,— ասել է Անդրանիկը 1918 թ. հունվարին։— Ասկե առաջ կար Ազգ. բյուրոն, որոնց նիստերին շատ անգամներ ներկա գտնված եմ և 15

16 «Մշակ», № 17—18, 1918, հունվարի 25—26.
17 Նույն տեղում։
18 Նույն տեղում։
19 Նույն տեղում։
20 Նույն տեղում։

ամիս առաջ զրուցած եմ ինքնապաշտպանության անհրաժեշտության մասին, բայց մտիկ ընող եղած չէ. «մարգարեություն» կոչած են և անցած է այսպես... Բարոյական կապեր և հարաբերություններ ունիմ հարևաններու հետ և այդ-քան»[21]։

Անդրանիկը մեծ հավատ ուներ հայ ժողովրդի ազատության ու նրա գալիքի նկատմամբ։ Նա խորին համոզմունքով ասում էր, որ ժողովրդի գիտակցությանը պետք է հասցնել այն ահավոր վտանգը, «որ կախված է մեր գլխուն վրա։ Կրկնեցեք, անդադար և համբերությամբ կրկնեցեք, որ ազատությունը կարող ենք ձեռք բերել՝ եթե ուզենք։ Եթե հայը չունենա գիտակցություն՝ փոխանակ ապրելու, պիտի մեռնի։ Վայրկյանի գիտակցությունը պետք է փրկե հայ ժողովուրդը»[22]։

1918 թ. հունիսից մինչև 1919 թ. մարտը Անդրանիկը իր ջոկատով գտնվում էր Նախիջևանի և Զանգեզուրի շրջաններում, մարտեր էր մղում թուրքական, ապա մուսավաթական զորքերի դեմ, ջանքեր թափում արգելակելու թուրք ջարդարարների կազմակերպած կոտորածները։

1918 թ. հուլիսի 14-ին Անդրանիկն իր զորամասը Սովետական Ռուսաստանի տրամադրության տակ դնելու հրաման է արձակում, իսկ Նախիջևանի շրջանը հայտարարում է Սովետական Ռուսաստանի անբաժանելի մասը։ Հրամանում հատկապես նշվում է, որ Սովետական Ռուսաստանի «հանրապետության իշխանությունը չընդունողները, կամ նրա թշնամիներին ընդառաջողները կհամարվեն Ռուսաստանի դավաճաններ և կենթարկվեն խիստ պատժի»[23]։ Այդ մասին Անդրանիկը հեռագրով հաղորդում է Կովկասի արտակարգ կոմիսար Ստեփան Շահումյանին, խնդրելով նրան հայտնել այդ լուրը Մոսկվա։ «Խնդրում եմ հայտնել ում որ հարկն է,— գրում է Անդրանիկը,— որ ես իմ ջոկատով այսօրվանից գտնվում եմ Ռուսաստանի կենտրոնական կառավարության տրամադրության տակ և ենթարկվում եմ նրան։ Կաշխատեմ արգելակել թուրքական զորքերի մուտքը Նախիջևանի գավառը»[24]։

Հուլիսի 17-ին Շահումյանը Մոսկվա՝ Լենինին է հայտնում Անդրանիկի ուղերձը, իսկ հուլիսի 20-ին պատասխան հեռագիր է ուղարկում Անդրանիկին և կոչ է անում շարունակել դիմադրությունը թուրք զավթիչներին։ Ստ. Շահումյանը Անդրանիկի միջոցով ողջունում է Նախիջևանի աշխատավորներին, որոնք «կրկնակի հալածվել են թուրքական սրի և աղգային պարագլուխների դավաճանության հետևանքով։ Հաշվի չնստելով ոչ մի դժվարության հետ, կոչ եմ անում հեղափոխական դրոշը չխոնարհել։ Բաքվի պրոլետարիատը Ռուսական իշխանությունների ակտիվ աջակցության շնորհիվ հերոսական պայքար է մղում բեկական բանդաների դեմ Քուրդամիրի և Աղսուի ուղղություններում»[25]։ Ստ. Շահումյանը Անդրանիկի հետ կապը կարգավորելու խնդիր է դնում։ Մի շարք հաղորդագրություններից երևում է, որ Անդրանիկը նպատակադրվել էր Աղդամի վրայով շարժվել դեպի Բաքու և օգնել կոմունայի պաշտպանությանը[26]։

---

21 Նույն տեղում։
22 Նույն տեղում։
23 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1965, № 1, էջ 23։
24 Նույն տեղում։
25 «Бакинский рабочий», 1918, № 141։
26 Տե՛ս «Աշխատանքի դրոշակ», № 27, 1918, հուլիսի 16, № 30, 1918, հուլիսի 28։

Հետաքրքիր է, որ «Իզվեստիա» թերթը հուլիսի 24-ին հաղորդում է տպում այդ մասին և ողջունում Անդրանիկի սովետական կողմնորոշումը։ Հատկապես նշվում է, որ Անդրանիկը անում է ամեն ինչ «Երևանի նահանգի Նախիջևանի գավառը թուրքական իմպերիալիզմի ներխուժումից պաշտպանելու համար»[27]։

«Իզվեստիան» այնուհետև «Հայկական ժողովրդական առաջնորդ Անդրանիկի սովետական օրիենտացիա ընդունելու առիթով» գրում է, որ «նրա սիրտը բաբախում է հայ գյուղացիության սրտի հետ համերաշխ... Նա հոգու զգացմունքով լսում է այդ գյուղացիության ձայնը և գործում հանուն նրա ազատության, ուստի պատահական չէ, որ Անդրանիկը հակվում է դեպի Սովետական Ռուսաստանը։

Նրա այդ որոշումով կտրվում են հայ գյուղացիության դարավոր շղթաները...

Ահա թե ինչու այդ պետք է համարել Սովետական Ռուսաստանի խոշոր հաղթանակը»[28]։

Անդրանիկը իր լայն ժողովրդականությամբ և դեպի Սովետական Ռուսաստանը ունեցած կողմնորոշումով մեծ անհանգստություն էր պատճառում թուրքական ագրեսորներին։ 1918 թ. հուլիսի 17-ին օսմանյան կառավարության ռազմական մինիստր Էնվեր փաշան իր հրամանում պահանջում էր ոտքի հանել «զենքի ընդունակ բոլոր իսլամներին» Կովկասում թուրքական կարգերը հաստատելու համար, փակել բոլոր ճանապարհները Անդրանիկի առաջ, որպեսզի նա իր զորամասերով չկարողանա օգնության հասնել Բաքվի կոմունային, որովհետև եթե այդ երկու ուժերը միանային, ապա, Էնվերի կարծիքով, անհնար կլինի Բաքվի գրավումը թուրքերի կողմից։ 1918 թ. օգոստոսին, երբ դաշնակցական կառավարությունը ստորաքարշությամբ թուրք-գերմանական բլոկի հետ մերձենալու քայլեր էր անում, Երևան այցելած գերմանական զորքերի հրամանատար Ֆոն Կրեսը դաշնակցական կառավարությանը խորհուրդ էր տալիս, որ իրեն ուղեկցող թուրքական ներկայացուցիչ Խալիլ փաշային հայտարարվի, թե «կառավարությունը ոչ մի կապ չունի Անդրանիկի և ոչ էլ բաքվեցիների հետ...»[29]։

Եվ երբ Խալիլ փաշան մեղադրում է դաշնակցականներին, որ իբր «Անդրանիկը Հայոց կառավարության ներշնչումներով է գործում և մասնավորապես նրա հրահանգով է մտել Զանգեզուր»[30], Քաջազնունին պատասխանում է, թե «Անդրանիկը պաշտոնական զինվորական հրամանով վտարված է մեր զորաշարքերից...» և նա «պետք է զինաթափվի և զինվորական դատի հանձնվի»[31]։

Խալիլ փաշան առաջարկում է Անդրանիկին Զանգեզուրից դուրս հանելու համար թուրքական, դաշնակցական և մուսավաթական միացյալ զորքեր ուղարկել։ Քաջազնունին դրան պատասխանում է, որ այդ հարմար չէ, քանի որ «սնունդ կտա Անդրանիկի այն պրոպագանդային, թե Հայաստանի կառավարությունը վաճառված է թուրքերին, դավաճանած է և այլն»[32]։ Նա խորհուրդ է տալիս միայն դաշնակցական զորամաս ուղարկել Անդրանիկի դեմ։ Խալիլ փա-

27 «Известия», 1918, հուլիսի 24։
28 Նույն տեղում, հուլիսի 26։
29 «Բաներ Հայաստանի արխիվների», 1965, № 1, էջ 27։
30 Նույն տեղում։
31 Նույն տեղում։
32 Նույն տեղում, էջ 28։

չան խոստանում է այդ մասին տեղյակ դարձնել իր կառավարությանը, «իսկ մյուս կողմից, բանակցել Ադրբեջանի կառավարության և Նուրի փաշայի հետ, որ նրանք համաձայնվեն Հայաստանի կառավարությանը թողնել Անդրանիկին հեռացնելու գործը»[33]։

Միևնույն ժամանակ «այն միտքը, թե թուրքերը ցանկանում են Անդրկովկասի վրայով իրենց տիրապետությունը տարածել մինչև Թուրքեստան՝ իր շատ որոշակի արտահայտությունը գտավ Խալիլ փաշայի խոսքերի մեջ»[34]։

1918 թ. ամռանը «Բակինսկի ռաբոչի» թերթը Նախիջևանի մասին գրել է. «Մեզնից հեռու ընկած այդ անկյունում ժողովուրդն իրեն կապված է զգում բանվորա-գյուղացիական Ռուսաստանի հետ։ Այնտեղ գյուղացիները, հին հեղափոխական պարտիզան Անդրանիկի գլխավորությամբ, սովետական այդ անկյունը պաշտպանում են թուրքական արշավանքից»[35]։

Թուրքերը, նոր հարձակում ձեռնարկելով Նախիջևան—Ջուլֆա—Խոյ ուղղությամբ, նպատակ ունեին շարժվել դեպի Բաքու։ Անդրանիկը հակահարված է կազմակերպում թուրքական ուժերի դեմ և օգնություն է հասնում Վանից գաղթած 25 հազար հայերին։ Իրանում գտնվող անգլիական գեներալները, ցանկանալով օգտագործել Անդրանիկի ուժերը, կեղծ խոստումներ են տալիս։ Անդրանիկը կողմ է կանգնում բոլոր նրանց, ովքեր Թուրքիայի դեմ էին։ Եվ որովհետև մուսավաթականները ամեն կերպ աջակցում էին թուրքերի առաջխաղացմանը դեպի Նախիջևան և հետո Բաքու, Անդրանիկը պայքարի մեջ մտավ նաև մուսավաթականների հետ։ Այդ հողի վրա էլ օգոստոսի 27-ին և սեպտեմբերի 28-ին Սիսիանի շրջանի Աղուտ, Վաղուտ և Ուռուտ ադրբեջանական գյուղերի մոտ ընդհարումներ են տեղի ունենում Անդրանիկի և թուրք զավթիչների հետ միացած մուսավաթական ջոկատների միջև։

Նման պայմաններում ազգայնական տարրերն ու բանդիտ ղոչիները ազգամիջյան ջարդեր էին հրահրում, թալանում ու կոտորում դարերով իրար հետ ապրող հայ և ադրբեջանցի աշխատավորներին։ Անդրանիկը ամենախիստ կերպով պատժում էր նրանց։ Նա, ստանալով էյվազլար գյուղի ադրբեջանցի բնակիչների բողոքը, կարգադրում է ամենախիստ միջոցներով պատժել մեղավորներին, բռնագրավել վերջիններիս ունեցվածքը և հանձնել տուժողներին[36]։

Թուրքական կառավարությունը իր գենոցիդի արյունոտ քաղաքականությունը իրականացնելու համար ամեն կերպ աշխատում էր պրովոկացիոն ընդհարումներ ու միջադեպեր ստեղծել տարբեր ազգերի աշխատավորների միջև, առաջնորդվելով «բաժանիր, որ տիրես» նշանաբանով։ Մինչդեռ Անդրանիկը, պայքարելով թուրքական բռնապետության դեմ, հոգատար վերաբերմունք է ցույց տվել դեպի բոլոր ազգերի խաղաղ բնակչությունը։ Նա, օրինակ, Սասունի Տափկա քրդական գյուղը 1903 թ. փրկել է ավազակախմբերի ասպատակություններից։ Կան բազմաթիվ փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս, որ Անդրանիկը հրամանով արգելել է հայ և թուրք աշխատավորների միջև թշնամանք սերմանելը և խիստ պատժել է ընդհարումներ հրահրողներին։

Դեռ 1905 թ. «Frankfurter Zeitung» թերթի թղթակցին արած հայտարարության մեջ Անդրանիկը մերժել է «այն մեղադրանքը», որ ինքն իբր թե այ-

33 Նույն տեղում։

34 Նույն տեղում։

35 «Бакинский рабочий», 1918, № 140։

36 Տե՛ս «Բաներ Հայաստանի արխիվների», 1965, № 1, էջ 25։

ում էր քրդական գյուղերը և սպանում կանանց, երեխաներին և ծերերին։ Խաղաղ ազգաբնակչության վրա նա երբեք հարձակում չի գործել[37]։

«Մեծ դժբախտություն է,— ասել է Անդրանիկը 1918 թ. հունվարին,— որ հայ ժողովուրդը ընդհարման մեջ է քուրդի հետ։ Ամեն միջոց պետք է գործադրել մոտիկեցնելու քուրդը մեզի»[38]։

Սակայն 1918 թ. Անդրկովկասում դաշնակցականների ու մուսավաթականների մեղքով տեղի են ունենում ազգամիջյան կռիվներ։ Անդրանիկը ընդհարվում է այն մուսավաթականների և դաշնակցականների հետ, որոնք աջակցում էին թուրք ջարդարարներին և հրավիրում նրանց Ադրբեջան՝ Բաքուն գրավելու։

Անդրանիկը բազմիցս հայտարարել է. «Թուրք խաղաղ բնակչության դեմ ...ոչ մի ոխ չունեմ. ես կռվում եմ միայն բեկերի ու կառավարության դեմ»[39]։ «Ես նացիոնալիստ չեմ,—ասում էր նա,—ես ճանաչում եմ միայն մի ազգ. դա բոլոր ճնշվածների ազգությունն է»[40]։

«Աշխատանք» թերթի 1918 թ. ապրիլի 4-ի «Կարնո անկում» հոդվածում նշվում է Անդրանիկի ժամանումը Կարին փետրվարի 17-ին և ժողովրդի սրտառուչ հանդիպումը ազգային հերոսի հետ։ Անդրանիկը վերցնում է Կարնո բերդի հրամանատարությունը և, դիմելով զինվորներին, պահանջում խիստ կարգապահություն։ Ուշագրավ է այն փաստը, որ նա պահանջում է ձեռք չտալ մուսուլմաններին։ Նա հրամայում է. «Կպահանջեմ հայերեն, որ ոչ ոք համարձակվի ձեռք տալ որևէ մուսուլմանի, նույնը կպահանջեմ նաև մուսուլմաններեն՝ հայերու նկատմամբ։ Ով հանդգնի խախտել իմ այս հրամանը, նա պիտի պատժվի ամենախիստ կերպով»[41]։

1915 թ. մի փաստաթղթում նշվում է, որ Անդրանիկը միայն քաջ զինվորական չէր. «խոր հոգեկան աղնվության և լայն սրտագին բարության հետ լինելով մեղմ և անպայման հումանիստ, նա մշտապես հետ է պահել իր բարեկամներին ավելորդ դաժանությունից։ Նա երբեք չի կիրառել «գերմանական կուլտուրական պրիոմները»։ «Ազատ Հայաստան»—ահա Անդրանիկի ամբողջ հերոսական կյանքի լոզունգը»[24]։

Վանի շրջանի մարտերի մասին զինվորական թղթակիցը 1916 թ. հաղորդել է. մի մարտից հետո թուրքերը հետ փախան — թշնամին թողել էր 350 դիակ և բազում վիրավորներ։ «Շատ վիրավորներ մեզ խնդրում էին սպանել իրենց, բայց Անդրանիկը դնդակահարության սպառնալիքով խիստ հրաման տվեց ոչ ոքի չսպանել»[42]։

Շատ ուշագրավ է այն փաստը, որ 1917 թ. դեկտեմբերից Անդրանիկը հայ ժողովրդին օրհասական ծանր վիճակից դուրս բերելու համար դիմում է բոլոր ազգերի մարդասեր ներկայացուցիչներին։

«Հասած է ժամը վերջին մարտնչումի,— գրում է Անդրանիկը.—Իմ խոսքս կուղղեմ այն բոլոր մարդկանց, որոնք խոր գիտակցությունն ունին հայ,

37 Տե՛ս «Մշակ», № 17, 1905, ապրիլի 27։
38 «Մշակ», № 17, 18, 1918, հունվարի 25—26։
39 «Հորիզոն», № 171, 1913, օգոստոսի 3։
40 Նույն տեղում։
41 «Աշխատանք», № 92, 1918, ապրիլի 4։
42 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1965. № 1, էջ 12—13։
43 Նույն տեղում, էջ 14։

ժողովրդի լայնածավալ տառապանքին, որոնք ունին մարդասիրական սիրտ, ամեն ազգե, ըլլան անոնք հույն, եզդի, ասորի, քյուրդ, իսլամ կամ ոչ իսլամ, որոնք ենթակա եղած են օսմ. բռնակալ կառավարության անմարդասեր սարսափներուն»[44]։

Միևնույն ժամանակ Անդրանիկը մերկացնում է հայ հարուստներին, որոնք իրենց քսակի շահը բարձր են դասում հայրենիքի ու ժողովրդի շահերից։ «Հայ հարուստ,— գրում է նա,— ավելորդ է ընել քո երեք տարվան պատմությունը, հայ հարուստ, այդ պատմությունը թող չկրկնվի... Թող չկրկնվի երբեք ձեր երեք տարվան պատմությունը, որում կողոպտեցիք պետական դանձարանները և լեցուցիք քու ամեն ինչ կլանող սունտուկները»[45]։

«Ջանգեզուրի դավառի մեր մուսուլման եղբայրներին» կոչում, որը նա գրել է 1918 թ. սեպտեմբերին, Անդրանիկը հիշեցնում է դավառի ադրբեջանցի աշխատավորությանը. «Մենք դարավոր եղբայրներ ենք,— և մեզմից յուրաքանչյուրը լիակատար իրավունք ունի ապրելու իր տանը, իր ընտանիքով շրջապատված... ամեն մի արդարամիտ ու մարդասեր մարդ պետք է գործադրի բոլոր ջանքերը, որպեսզի վիճելի հարցերը լուծվեն ոչ թե անմեղների արյունահեղության միջոցով, այլ խաղաղասիրական սկզբունքների հիման վրա»[46]։

Մի առանձին ցավով ու զայրույթով էր խոսում Անդրանիկը հայերի ու վրացիների միջև այսպես կոչված «չեղոք զոնայի» շրջանում դաշնակցականների ու մենշևիկների կողմից սարքած ընդհարումների մասին։

Հովհաննես Թումանյանը հիշեցնում է Անդրանիկի հետևյալ խոսքերը. «Երբ իրիկունը գլուխներդ բարձին դնեք, որ քնանաք, մի քիչ մտածեցեք ձեր ազգի մասին։ Այնուհետև մտածեցեք ձեր հարևանի մասին, հայ լինի նա, թուրք լինի, ռուս լինի, վրացի լինի, ով կուզե լինի, և բարի մտածեցեք...»[47]։

Բազմաթիվ փաստեր կան, որ Անդրանիկը խստորեն պատժել է իր իսկ զինվորներից նրանց, ովքեր ձեռք են բարձրացրել խաղաղ բնակչության վրա, անկախ նրանց ազգությունից։

Այսպիսով, Անդրանիկի հակամուսավաթական, ինչպես նաև հակադաշնակցական գործելակերպը բացատրվում է նրանով, որ վերջիններս վարում էին հակառուսական քաղաքականություն և պաշտպանում էին թուրք ջարդարարներին։

Նա կողմ էր բոլոր նրանց, ովքեր ռուսական կողմնորոշում ունեին և թշնամի բոլոր նրանց, ովքեր պաշտպանում էին թուրք ագրեսորներին։

Ուշագրավ է այն փաստը, որ դեռևս 1891—1900 թթ. Անդրանիկը հարել է հնչակյան կուսակցությանը, գործել նրա հայդուկային խմբերում։ Անդրանիկի հեղինակությունը օգտագործելու համար դաշնակցականները նրան գրավում են իրենց կողմը։ Սակայն երբ նա մոտիկից տեսնում է «երիտասարդ թուրքերի» և դաշնակցական կուսակցության համագործակցությունը, ավելի է վրդովվում նրանց դեմ։ Նա իր հոդվածներում ու ելույթներում նշում է, որ ինքը և իր զինակիցները հայ ժողովրդի ծոցից են դուրս եկել և նրանից սնունդ առել, հետե-

44 «Հայաստան», 1917, № 182։
45 Նույն տեղում։
46 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ցուց. 1, գ. 51, թ. 23։
47 Հով. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 224—225։

վապես չեն պատկանում ո՛չ դաշնակցությանը և ո՛չ էլ որևէ կուսակցության։ Դաշնակները ցանկացել են նրա դեմ մահափորձ կատարել կամ էլ իրենց՝ հլու կամակատար դարձնել, բայց այդ նրանց չի հաջողվել։

1918 թ. սեպտեմբերին մի քանի խմբապետներ լքում են Անդրանիկին և մեկնում Դարալագյազ, միանում դաշնակցական կառավարության ենթակա զորամասերին (4 հազար զինվորից մնում է 1300)։ Անդրանիկը Շուշու և Գանձակի գնդերի հետ բռնում է Գորիս—Սիսիան պաշտպանական գիծը, ապա շարժվում օգնելու Ղարաբաղի հայությանը, որը ենթակա էր կոտորածների Թուրք-մուսավաթական ուժերի կողմից։

Համաշխարհային պատերազմում դերմանա-թուրքական բլոկի պարտությունից հետո Անդրանիկը իր ջոկատով մեկնում է Էջմիածին։ Նա հրաժարվում է բանակցությունների մեջ մտնել դաշնակցականների հետ, կաթողիկոսին է հանձնում իր ջոկատի զենքն ու հանդերձանքը, ապա մեկնում է Թիֆլիս, Կ. Պոլիս, Անգլիա։

1919 թ. հունիսից մինչև 1922 թ. օգոստոս Անդրանիկը բնակվում է Մանչեստրում, որտեղ գլխավորում է հայ գաղթականությանը և որբերին օգնություն ցույց տվող հայ-անգլիական կոմիտեի գործունեությունը (այցելել է Փարիզ՝ Պողոս Նուբար փաշայի հրավերով, եղել է ԱՄՆ-ում)։ Անդրանիկը ողջունում է սովետական կարգերի հաստատումը Հայաստանում և մինչև իր կյանքի վերջը մնում է սովետական երկրի բարեկամը։ 1922 թ. մեկնում է մշտական բնակության ԱՄՆ։ 1926 թ. իր զենքը նվեր է ուղարկում Երևանի թանգարանին։

Անդրանիկը 1926 թ. կոչ էր անում Ամերիկայի հայերին օգնել Սովետական Հայաստանի վերաշինությանը։ Նա գրում է. «Սիրալիր բարևներ հաղորդել ալևոր Արարատի հովանիին տակ գտնվող ստեղծագործող, ժրաջան ու աշխատող Հայաստանի պետական պաշտոնյաներուն, իմ հայ ժողովրդին և Հայաստանի զմայլելի ծաղիկներուն՝ հայ որբերուն»[48]։

Իր մահից երեք շաբաթ առաջ Անդրանիկը ասել է. «Պետք է բարյացակամ ըլլալ Հայաստանի ներկա կառավարության հանդեպ. պետք է ուժ տալ Հայաստանի շինարարական ձեռնարկներուն և զորացնել զայն՝ իբրև մեր ապագա հույսերու խարիսխը»[49]։

Ալ. Մյասնիկյանը վկայում է, որ «Անդրանիկը Ֆրեզնոյից Փարիզ նամակ է գրում, որտեղ հայտնում է, որ «լավ տպավորություն և մի անուշ համակրանք թողուցած են հանրապետության (խոսքը Սովետական Հայաստանի մասին է— Ռ. Ա.) վարիչները մինչև հիմա»[50]։

Անդրանիկը վախճանվում է 1927 թ. օգոստոսի 31-ին։ Թաղվել է Ֆրեզնոյի Արարատյան դերեզմանատանը, ապա 1928 թ. Անդրանիկի աճյունը տեղափոխվում է Փարիզ՝ Պեր-լա-Շեզ գերեզմանատունը։

* * *

Ինչպես տեսնում ենք, Անդրանիկը անցել է կյանքի շատ բարդ ու հակասական ուղի։ Նա հայ ժողովրդի պատմության մեջ հանդես է եկել որպես ազ-

48 «Բաներեր Հայաստանի արխիվների», 1965, № 1, էջ 31։

49 «Մշակ», 1927, հոկտեմբերի 18։

50 Տե՛ս Ալ. Մարտունի, Գաղութահայ աշխատավորությանը, «Մարտակոչ», հոկտ. 1923։

գային-ազատագրական պայքարի հերոս, հայ աշխատավորությանը պաշտպանել է թուրքական յաթաղանից։

Վերոհիշյալի հիման վրա Անդրանիկի հասարակական և քաղաքական դերը կարելի է գնահատել հետևյալ կերպ.

1. Անդրանիկը, պատանի հասակից ականատես լինելով հայ ժողովրդի անլուր հալածանքներին ու ճնշումներին, ուխտել էր իր ամբողջ կյանքը նվիրել հայրենիքի ազատագրման գործին, թուրք բռնակալների ծանր լուծը թոթափելու համար։ Այդ նպատակով նա դիմել է բազմաթիվ միջոցների։ Ապստամբության ու պայքարի կոչ անելով, հայդուկային զինված խմբերի միջոցով մահու և կենաց պայքար է մղել և մի շարք հաղթանակներ տարել թուրքական կազմակերպված զորքերի դեմ, եղել է Ռուսաստանում ու Եվրոպայի մի շարք երկրներում՝ զենք և աջակցություն ստանալու համար։ Նա մեծ հույսեր էր կապում բալկանյան ժողովուրդների, ինչպես նաև թուրքական յաթաղանի տակ հեծող մյուս ժողովուրդների ապստամբության հետ։ Անդրանիկը ցավով էր նշում, որ Թուրքիայի մուսուլմանական ժողովուրդները, սարկացած վիճակում գտնվելով, դեռևս ազգային-ազատագրական համատեղ պայքարի չեն դիմում։ Նրա կարծիքով ճնշված ժողովուրդների միասնական պայքարը շատ կարևոր նշանակություն կունենար օսմանյան տիրակալությունը տապալելու համար։ Թուրքիայում ապրող ամեն մի ժողովրդի ազատագրական պայքարը նա դիտում էր որպես թուրքական բռնապետությունը թուլացնելու մի ազդակ։ Հենց այդ նպատակով էլ Անդրանիկը իր ջոկատով 1913 թ. հերոսաբար մարտնչեց բուլղարական ժողովրդին Թուրքիայի լծից ազատագրելու համար, համարելով այդ նաև իր հարազատ հայ ժողովրդի ազատագրման սկիզբը։ Հայ ժողովրդի ազատագրումը իր կյանքի խորհրդանիշը համարելով, Անդրանիկը բռնակալների լծից անկախ հայրենիքի զարգացումը համարում էր ամենասրբազան գործը։

2. Անդրանիկը ազատագրական պայքարում հիմնականը համարում էր ժողովրդի ըմբոստությունն ու հերոսական պայքարը, նրա անպարտելի դիմադրական ոգին։ Միաժամանակ նա պայքարի հաջողությունը կապում էր արևմտյան տերությունների, իսկ հիմնականում՝ տրադիցիոն կերպով Ռուսաստանի հետ։ 1914—1916 թթ. Անդրանիկը, համոզվելով ցարական կառավարության նենգ քաղաքականության մեջ, հեռանում է բանակից և զբաղվում հայ գաղթականությանը օգնելու գործով։ Նա հայ ժողովրդի բախտը կապում էր դեմոկրատական Ռուսաստանի հետ։ Շատ ուշագրավ է, որ դեռևս 1905 թ. Անդրանիկը ռուսական հեղափոխության հաղթանակը կարևոր խթան էր համարում հայ ժողովրդի ազատագրման գործում։ Այդ արդեն Անդրանիկին բնութագրում է որպես առաջադեմ գործչի։ Ցարիզմի տապալումից հետո Անդրանիկը հայրենիքը պաշտպանելու կոչ է անում։ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո կազմելով Հայաստանի երկրապահ զորամաս, Անդրանիկը դեմ է կանգնում թուրք-գերմանական ներխուժումներին, հայ ժողովրդի բախտը կապում է Սովետական Ռուսաստանի հետ։ Նա դատապարտում է Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու՝ ազգայնակաների դավաճանական քաղաքականությունը, ասելով. «Ռուսիո դոները մեզի դեմ մի փակեք», «մեր միակ բարեկամը Ռուսիան է... մենք անոնց բարեկամության պետքն ունինք»։ Բաքվի կոմունայի և անդրկովկասյան դեմոկրատիայի համար ստեղծված ծանր օրերին հայ կոմունիստները ջանքեր էին գործադրում Անդրանիկի ուժերը ծառայեցնելու հոգուտ հեղափոխության։ Անդրանիկը, հանդիման կանգնելով մու-

սավաթականների և դաշնակների աջակցությամբ Նախիջևանի վրայով դեպի Բաքու շարժվող թուրքական ուժերին, իր զորքերը դրեց Սովետական Ռուսաստանի տրամադրության տակ և Նախիջևանը հայտարարեց Սովետական Ռուսաստանի անբաժանելի մասը։ Այդ հերոսական քայլը արժանացավ Վ. Ի. Լենինի և Ստ. Շահումյանի հավանությանը, ժամանակի կուսակցական ու սովետական մամուլի բարձր գնահատականին։ «Իզվեստիան» նշում էր, որ Անդրանիկը անում է ամեն ինչ «Նախիջևանի դավառը թուրքական իմպերիալիզմի ներխուժումից պաշտպանելու համար»։ Թերթը Անդրանիկի Սովետական Ռուսաստանի կողմը անցնելը բացատրում է նրանով, որ նա լսում է «դյուղացիության ձայնը և գործում հանուն նրա աղատության»։ 1918 թ. Անդրանիկը Անդրկովկասում միակ զորավարն էր, որ իր ջոկատը դրեց Սովետական Ռուսաստանի տրամադրության տակ և պատրաստակամություն հայտնեց պաշտպանել Բաքվի կոմունան թուրքերի հարձակումից։

3. Անդրանիկը իր մի հրամանում նշում է, որ Սովետական Ռուսաստանի իշխանությունը «չընդունողները կամ նրա թշնամիներին ընդառաջողները կհամարվեն Ռուսաստանի դավաճաններ և կենթարկվեն խիստ պատժի»։ Այդ նույն ժամանակ էնվեր փաշան հրաման է տալիս միավորել բոլոր ռեակցիոն ուժերը և փակել Անդրանիկի ճանապարհը, որպեսզի նա չկարողանա օգնել Բաքվի կոմունային։ Անդրանիկը պայքարում էր Բաքվի կոմունայի երդվյալ թշնամիների՝ թուրքական զորքերի դեմ։ Թուրք զավթիչները կատաղի հարձակումներ էին գործում դեպի Բաքու ուղի հարթելու համար։ Նրանց աջակցում էին Նուրի փաշայի և մուսավաթականների կողմից մոլորված որոշ խմբեր, որոնց դեմ և պայքարում էր Անդրանիկը։ Դա փաստորեն մի կողմից քաղաքացիական և մյուս կողմից՝ օտար զավթիչների դեմ ուղղված պատերազմ էր։ Պարզ է, որ նման պայմաններում դաշնակցական և մուսավաթական տարրերը իրենց սև գործն էին կատարում, հրահրում աղգամիջյան ջարդեր ու ընդհարումներ։ Անդրանիկը կատաղի թշնամի էր թե՛ դաշնակցական և թե՛ մուսավաթական ավանտյուրիստների ապգաղավ քաղաքականության։ Սակայն նրանց հաջողվում էր որոշ դեպքերում իրենց մութ գործերը վերագրել Անդրանիկին։ Այդ մտայնությունը (որ, դժբախտաբար, որոշ մարդկանց մոտ պահպանվել է մինչև մեր օրերը) չի համապատասխանում պատմական փաստերին։ Անդրանիկը աղգամիջյան կռիվներից հեռու է մնացել, քարոզել է ժողովուրդների բարեկամություն։ Նա պայքարել է թուրքական կառավարության դաժան ռեժիմի դեմ, նրա հայաջինջ քաղաքականության դեմ և բոլոր նրանց դեմ, ովքեր ուղղակի կամ անուղղակի պաշտպանել են այդ քաղաքականությունը։ Անդրանիկը միշտ լարված հարաբերություններ է ունեցել դաշնակցական պարագլուխների, ինչպես նաև մուսավաթականների հետ։ Անդրանիկը չէր հաշտվում հարևան ժողովուրդներին իրար դեմ լարելու քաղաքականությանը և հենց այդ պատճառով էլ հեռացավ Անդրկովկասից։ Սակայն նա ողջունեց սովետական կարգերի հաղթանակը Անդրկովկասում ու Հայաստանում և մինչև իր կյանքի վերջը մնաց սովետական երկրի ջերմ ու հետևողական բարեկամը։

4. Միաժամանակ պետք է նշել, որ Անդրանիկը չկարողացավ հասնել սոցիալական և քաղաքական պայքարի գիտակցման աստիճանին։ Նրա գործունեության մեջ կային շատ մոլորություններ։ Նա չկարողացավ հասկանալ, որ պատմական տվյալ ժամանակաշրջանում ազգային-ազատագրական պայքարը սերտորեն առնչված էր սոցիալական պայքարի, կապիտալիզմի լուծը թոթա-

փելու և պրոլետարիատի դիկտատուրա հաստատելու համար մղվող պայքարի հետ։ Ուստի նրա ընտրած ուղին չէր կարող հանդեցնել հայ ժողովրդի բաղձալի ազատությանը։ Որոշ ժամանակ Անդրանիկը հավատացել է Անգլիայի, Ֆրանսիայի ու ԱՄՆ-ի խոստումներին, որոնք պատերազմի ժամանակ Ռուսաստանի դաշնակիցներն էին։ Դա մոլորություն էր։ Հետագայում Անդրանիկը վճռականորեն դատապարտեց արևմուտքի տերությունների նենգ դավերը։ Նա հայրենիքի ազնիվ ու նվիրված հերոս զինվորն էր, սակայն ո՛չ դիվանագետ էր և ո՛չ էլ քաղաքականագետ։ Նա որոշ ժամանակ հավատում էր, որ իմպերիալիստական պատերազմի ընթացքում կարող է լուծվել հայկական հարցը։

5. Իր անձնական քաջագործությունների և հայրենասիրության բազում գործերի համար Անդրանիկը մեծ ժողովրդականություն և լեգենդար հերոսի փառք է վաստակել։ Ժողովուրդը նրա շուրջը բազմաթիվ երգեր ու պատմվածքներ է հյուսել։ Դրա համար էլ Անդրանիկի մասին պետք է հիմնավորված ու ճշմարտացի խոսք ասվի, նշվեն նրա դերն ու ծառայությունները հայ ազգային-ազատագրական պայքարում, ինչպես նաև նրա առանձին մոլորությունները։ Միայն փաստացի հարուստ նյութի ու բարեխիղճ ուսումնասիրությունների հիման վրա հնարավոր կլինի վեր հանել Անդրանիկի կյանքի ու գործունեության իսկական հայրենանվեր պատմությունը և միաժամանակ ցույց տալ, որ հայ ժողովրդի, ինչպես նաև մյուս բոլոր ճնշված ժողովուրդների ազատագրության իսկական ուղին սոցիալիստական հեղափոխության ուղին էր։

О ДЕЯТЕЛЬНОСТИ ПОЛКОВОДЦА АНДРАНИКА

Академик АН Арм. ССР Ц. П. АГАЯН

(Резюме)

За последние годы как у нас, так и в зарубежной армянской прессе был опубликован ряд статей о легендарном герое армянского национально-освободительного движения генерале Андранике Озаняне. Большинство авторов этих статей в основном правильно раскрывает образ Андраника, однако некоторые из них или вообще закрывают глаза на слабые стороны и недостатки в деятельности Андраника, или же видят только его заблуждения и ошибки.

Андраник прошел сложный и противоречивый жизненный путь, посвятив себя целиком борьбе против порабощения армянского народа турецкими угнетателями. Он выступал также в поддержку национально-освободительной борьбы многих подвластных Турции народов. Примечательно, что в 1913 г. Андраник принимал активное участие в борьбе болгарского народа против турецкого ига. Гарантией успеха национально-освободительного движения армянского народа Андраник считал помощь со стороны демократической России. Еще в 1905 г. он справедливо полагал, что победа русской революции станет важным фактором в деле освобождения армянского народа из-под турецкого владычества.

После победы Октябрьской революции Андраник выступал за тесное сотрудничество с молодой Советской Россией, видя в этом спасение

своего народа. В тяжелые дни Бакинской Коммуны он обратился к ее руководителям с заявлением о готовности предоставить свои войска в распоряжение большевиков. Известно, что в то время он развернул активные боевые действия против турецких оккупантов, движущихся на революционный Баку.

Андраник приветствовал победу Советского строя в Армении и до конца своей жизни остался горячим сторонником и другом возродившейся Армении.

В статье одновременно отмечается, что Андраник не дошел до понимания необходимости сочетания национально-освободительного движения с политической борьбой за социальное освобождение. Это был основной недостаток избранного им пути освобождения родного народа. Ошибался он и тогда, когда верил лживым обещаниям империалистических стран Запада и царской России об оказании помощи армянскому народу.